

1. լուսանկարով տեղեկանք ավարտական դասարանում սովորելու մասին՝ հաստատված դպրոցի տնօրենի կողմից (նախորդ տարիների շրջանավարտները ներկայացնում են ավարտական փաստաթուղթ՝ ատեստատ կամ դիպլոմ)։
2. 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի)։
3. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, զինվորական գրքույկ, ծննդյան վկայական, փախստականի վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական)։ Անձնագրի կամ ծննդյան վկայականի բացակայության դեպքում ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության կողմից տրվող՝ անձը հաստատող ժամանակավոր փաստաթուղթ, տեղեկանք՝ բնակության վայրից։
4. զինապարտի կցագրման վկայական կամ զինվորական գրքույկ, ինչպես նաև զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունն անցած լինելու, ծառայության վայրի և ծառայողական բնութագրի մասին։ Սույն ենթակետում նշված փաստաթղթերը չներկայացնելը չի կարող հիմք ծառայել դիմորդի ընդունելության դիմում-հայտը և փաստաթղթերը չընդունելու համար։
5. Սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են տվյալ արտոնություններից օգտվելու իրավունքը հավաստող փաստաթղթեր։
6. միջազգային մրցույթների դիպլոմները։
7. ներբուհական յուրաքանչյուր քննությանը մասնակցելու, ինչպես նաև փաստաթղթերն ընդունելու և ձևակերպելու համար 1500-ական դրամ վճարելու վերաբերյալ անդորրագիրը։

ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության կարգի 105-108-րդ կետերով (ՀՀ կառավարության 2012թ. ապրիլի 26-ի N 597-Ն որոշում) սահմանված արտոնություններից օգտվող դիմորդներն ազատվում են ընդունելության քննությունների վճարից:

105. Քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին մրցույթից դուրս ընդունվում են ՀՀ պաշտպանության ժամանակ գոհված (մահացած) զինծառայողների երեխաները, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դարձած քաղաքացիները՝ համաձայն ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքների:

106. Վճարովի համակարգի համար առնվազն անցումային միավորներ հավաքելու դեպքում անվճար ուսուցման համակարգ են ընդունվում՝

1) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամություն ունեցող անձինք և մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխաները։

2) առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխաները։

107. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները զորացրվելուց հետո՝ երեք տարվա ընթացքում, քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում՝ 1) անվճար ուսուցմամբ ընդունվում

են ընդհանուր մրցույթից դուրս (առանձին մրցույթով)՝ ըստ մասնագիտությունների՝ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի: Մրցութային հավասար միավորների դեպքում առավելություն է տրվում մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ծառայության դրական ցուցանիշներ ունեցող դիմորդին 2) անվճար ուսուցման մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդները վճարովի ուսուցման մրցույթին մասնակցում են ընդհանուր հիմունքներով:

108. Առանց ընդունելության քննության ՀՀ կառավարության կողմից հասկացված պահուստային տեղերի հաշվին բուհ են ընդունվում միջնակարգ դպրոցի հանրակրթական առարկաների գծով միջազգային օլիմպիադաների հաղթողները, տարբեր մարզաձևերի գծով աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրները, ովքեր ընդունելության դիմում-հայտում հայտագրել են համապատասխան մասնագիտությունները:

Սահմանված արտոնություններից օգտվելու դեպքում ներկայացվող լրացուցիչ փաստաթղթերն են՝

105

- Տեղեկանք զինծառայող ծնողի զոհվելու մասին (բնօրինակը և պատճենը 2 օրինակից),
- Ծնողի մահվան վկայականը (բնօրինակը և պատճենը 2 օրինակից),
- Դիմորդի ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը 2 օրինակից):

106 - 1

- Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը 2 օրինակից),
- Տեղեկանք 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, կամ մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամ լինելու մասին (բնօրինակը և պատճենը 2 օրինակից):

106 - 2

- Անձնագիրը և ծննդյան վկայականը (բնօրինակը և պատճենը 2 օրինակից),
- Առանց ծնողական խնամքի մնալու մասին հաստատող փաստաթղթերը (բնօրինակը և պատճենը 2 օրինակից):

107

- Զինվորական գրքույկ և տեղեկանք զինվորական կոմիսարիատից ժամկետային զինվորական ծառայությունն անցնելու մասին (տեղեկանքի բնօրինակը և պատճենը 1 օրինակից):